

ժակք, սկսան ապա ճառախօսութիւնք. ատենախօսք նորանոր ձևերով, ոմանք ջրոյ աղնուութիւնը և կենսական օգտակարութիւնքը գովեցին, այլք նկարչապետին ջրային նկարները, հնոյն Կաֆայ անցեալ փառքը ներողեցին ոմանք, այլք թէոգոսիոյ ապագայ ծաղկեալ վիճակը շնորհիւ Այվազեան ջրմուղին. անլռելի ուռաններ ճառերուն վերջաբան կը լինէին. այս հարկ է յաւելուլ, որ բարձրագոյ կեցցէները խառն երաժշտական գործեաց բարձրագոյ ձայներուն, գրգիռ կը լինէին նորանոր ատենախօսութեաց, մանաւանդ որ ոգևորըմպելիք շատերուն լեզուին կապերը քակել էին. դեռ շատ ևս պիտի երկարէր ուրախալի հանդէսը, եթէ ժամանակը առաջ գնալով հարկ չլինէր աւարտ տալ սեղանոյն:

Շարունակելի

Հ. ՔԵՐ. Վ. ՔՈՒՇԵՆՐԵԱՆ

ՍՊՔՏ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ԵԴՄՈՆԴ ՏԷ ԱՄԻՁԻՍԻ

— (ՏԵՍ ՀԱՏ ԽԻ. ԷՋ 50) —

Փոխան վարժապետին

ՅՈՒՆՈՒԱՐ, 4, Զորեշարէի

ԲՈՅՐՍ իրաւունք ունէր. վարժապետը տկար ըլլալուն պատճառաւ տխուր էր. և յերաւի երեք օրուընէ 'ի վեր իւր տեղ փոխանորդն կու գայ, այն անմեղուս փոքրահասակն որ կարծես պատանեակ մ'է: Այս առաւօտ անպատշաճ իր մը պատահեցաւ: Արդէն իսկ առաջին և երկրորդ օրերը դպրոցին մէջ խառնակութիւն կար, վասն զի փոխան վարժապետին մեծ համբերութիւն ունի, և միայն այսպէս կ'ըսէ. — Հանգարտ կեցէք, խնդրեմ հանգարտ կեցէք: — Բայց այս առաւօտ ալ չափը անցաւ: Բղջալ մը տրեւէր, և իւր խօսքերն այլ ևս չէին լսուէր. իսկ ինքն կ'աղագարարէր, կ'աղաչէր, սակայն 'ի զո՛ւր: Տեսուչն կրկին անգամ գլուխը դռնէն կարկառեց և նայեցաւ. բայց երթալուն պէս շնչոցն վերստին կը սաստկանար՝ իրեւթէշուկոյ մ'ըլլար: Կառն և Տէոսօսի անուշութեամբ մը կը գառնային ակնարկելու դասակցաց՝ որ հանգարտ կենան, և թէ ամեթ է. սակայն ոչ ոք մտիկ կ'ընէր: Սգառտին միայն հանգարտ կը կենար, իւր արմիրուքն ստոլին վրայ գրած և փակ ձեռքերն քնքաջը, թերևս իւր մեծահոգի գրաստունն մոտձեւելով, և Կառօֆֆին՝ այն շանկաձև քիթն և թղթակնիքներ հաւաքողը, որ անգուշ զրադեալ էր գրպանի կաղամարի մը վիճակահանութեան համար երկու հարկերեկջ ստորադրուողաց ցուցակ մը շինելու: Այլք կը շաղակրատէին և կը ծիծաղէին, և գրասեղանաց վրայ խօթած գրչաց ծայրերը կը զարնէին, և գուռլպաներուն ձգտական թելերովը ծամծամած թղթի փոքրիկ քնդակներ կը նետէին: Փոխան վարժապետին երբեմն միոյն թւէն կը բռնէր, երբեմն միւսոյն, և կը ցնցէր. և մին՝ պատին գիժացը

կայնեցուց. — այլ յանօգուտս. չէր գիտեր որ սուրբին գիմել. կը պաղատէր, — ինչո՞ւ այսպէս կ'ընէք. կուզէք որ բռնի յանգիմանութիւն լսեմ: — Յետոյ գրասեղանին վրայ բռնցի զարկելով, ողորց և զայրացման ձայնիւ կ'աղաղակէր. — Լուսութիւն, լուսութիւն, լուսութիւն: — Կը խղճար մարդ զայն լսելով: Սակայն աղաղակը միշտ կը սաստկանար: Ֆուսթի վրան թղթէ փոքրիկ նետ մը նետեց, ոմանք կատուի ձայներ կը հանէին, այլք կը ծեծկուէին. անկտրագրելի տակնուվրայութիւն մը տիրեր էր, երբ պաշտօնեայն յանկարծ ներս մտնելով ըսաւ. — Պարտն վարժապետ, Տեսուչը զհրամանեդ կ'ուզէ: — Վարժապետը ոտք ելաւ և յուսահատութեան ձև մ'ընելով գնաց փութով: Այն ատեն խառնաձայն աղաղակն աւելի ևս սաստկացաւ: Սակայն յանկարծ Կառօն այլադուռնեալ կերպարանօք և սեղմեալ բաժմբք վեր ցատկէց, և 'ի ցամառնէն հեղձեալ ձայնիւ աղաղակեց. — Բաւական է, անբանք, իւր աղնուութեամբն գուգ կը զնգնանիք: Եթէ ոսկրնիդ փշրելու ըլլար՝ շանց նման մթած պիտի մնայիք. վատարտաց գունդ մ'էք: Ասկից վերջ, այն՝ որ առաջին անգամ զինքը ծաղրածէ, ես գուրաը իրեն կը ոպասեմ, և անոր ատամունքն պիտի խորսաակեմ, կ'երգնեմ մ'նոյն իսկ իւր հօրն այցա առջև: — Ամենքն ալ լռեցին: Ո՛հ, որքան գեղեցիկ էր տեսնել զԿառօն իւր բոցարձակ աչքն. կարծես կաղաժ կորիւն առեւծու մ'էր: Սկսաւ մէկիկ մէկիկ գիտել ամենէն աւելի յանգագունքն, և ամենքն ալ գլուխներն խոնարհեցուցին: Երբ փոխան վարժապետին կարմրացեալ աչքք վերբայ տին ներս մտաւ, և ոչ իսկ շնչառութիւն մը կը լսուէր. — Ապշած մնաց: — Բայց յետոյ տեսնելով զԿառօն գեա բողբոջին բոցավառ և վրդովեալ, հասկցաւ. և մեծաւ գորովով իբր եղբոր մը՝ ըսաւ իրեն. — Շնորհակալ եմ քեզ Կառօն:

Սրբապետի գրատուռնն

Սգառախին գացի. որ գարոցի առջևի առնը կը ընտկի, և իրաւցնէ տեսնելով իւր գրատուռնն՝ նախանձ զգացի: Հարուստ չէ, չկրնար շատ գրեանք գնել. սակայն մեծաւ խնամքօք գարոցական գրքերը և ծնողացը ընծայածքն կը պահէ. և իրեն տուած ատակներն կը ժողվէ և գրածախին կը դործածէ. այս կերպով պզտի գրատուռն մը ձևացուցած է. և իւր հայրը երբ իմացեր է թէ այսպիսի հակամտութիւն մ'ունի, իրեն համար ընկողն գեղեցիկ գրատուռն մը գնէր է կանաչ վարագոյրով, և գրեթէ ամենայն հատորքն տղուն ուղած գոյնեքովը կաղմել տուեր է: Հիմակ երբ ինքը լարը կը քաշէ՝ վարագոյրը կը բացուի, և երեք կարգ գրեանք կը տեսնուին ամեն տեսակ գուններով, ամենքն ալ կարգու շարուած, փայլուն, ետևին ոսկեգրով անուանին գրովմեալ, պատմութեանց, ճանապարհորդութեանց և բանաստեղծութեանց գրքեր. կան նաև պատկերազարդեալք: Գրեմ ինքն ալ գոյները աղէկ կարգադրել. Զորմակ հատորները կարմիրներուն քով կը գնէ, գեղիններն սևոց քով, և կապոյտքն սպիտակաց հետ, այնպէս որ հեռուէն տեսնուին և գեղեցիկ երևան. և կապալտքն սպիտակաց հետ, այնպէս որ հեռուէն տեսնուին և գեղեցիկ երևան: Կարգաւառաւ ապա զանոնք փոփոխելով կը գուարձանայ: Շինած է իւր ցուցակն ալ: Գրավաճառի ապա զանոնք փոփոխելով կը գուարձանայ: Շինած է իւր ցուցակն ալ: Գրավաճառի կաղմը կը ըննէ. տեսնելու բան է թէ ինչպիսի խնամք կը բանայ զանոնք, իւր այն կարճ և ստուար ձեռքն՝ թղթոց մէջ փշելով. գեա ամենքն ալ շոր կը կարծուին: Մինչգեա ես բոլոր իմ ունեցածներս փճացուցի: Ամեն նոր գիրք գնելուն՝ իրեն հաւմար յղկելու, տեղաւորելու տուն մ'է. ձեռքը կ'առնու. որպէս զի ամեն առողերն ըննէ, և գանձի մը պէս կը պահէ: Ժամուան մը մէջ ինծի ուրիշ բան չըլցուցուց: Զա-

փառանք ընծեռնելուն պատճառաւ աչքերը կը ցաւէին: Նոյն վայրկեանին հայրը սե-
նեակը մտաւ, որ իրեն նման յոյր և ստուար է. անոր պէս անագին գլուխ մ'ունի,
և երկու երեք անգամ տղուն ծոծրակին զարնելով, իւր անագին ձայնովը ըսաւ
ինծի. — Է՛, Բ՛նչ կ'ըսես այս պղնձէ անհէթեթ գլխուն համար. ապահով եղիր, բանի
մը պիտի գայ: Իսկ Սգառաօի այն տամարգի փայփայմանց միջոց, իբր անագին որսա-
կան շուռ մը աչքերը կ'փակէր: Չեմ գիտեր, հետը կատակելու չէի համարձակեր.
չէի կրնար հաւատալ թէ տարի մը միայն ինծմէ մեծ ըլլայ. և երբ ինձ ըսաւ սեմին
վրայ, — Բարեաւ տեսնուի՞նք, — իւր այն կարծես միշտ զայրագնեալ երեսովը, քիչ
մնաց որ պատասխանէի, — Ընդունէ իմ մեծարանքս. — իբր մարդու մը: Յետոյ տան
մէջ ըսի զայն հօրս. — Չեմ հասկնար, Սգառաօին հանձար չունի, քաղաքավարական
կերպեր չգործածեր. գրեթէ միմոտական գէմք մ'ունի. և սակայն զինքը կը յար-
գեմ: — Իսկ հայրս պատասխանեց. — Վասն զի հաստատամտութիւն ունի: — Եւ ես
յաւաւրի. — Ժամ մը հետը կեցայ՝ բերնէն հինգ բաւ չհանեց, խաղ մը ինծի չըջցուց,
անգամ մը չծիծաղեցաւ. այնու հանգերձ յօժարակամ կեցայ իւր քովն: — Իսկ
հայրս պատասխանեց. — Վասն զի զինքը կը յարգես:

Դարբնի որդին

Այժ, սակայն զԲեռքոսսին ևս կը յարգեմ: մանաւանդ թէ խիստ քիչ կը համա-
րիմ ըսելն միայն՝ թէ զինքը կը յարգեմ: Բեռքոսսի, դարբնի որդին, այն փոքրա-
հասակն, տոգոյնն, որ աշնիւ և արևուր աչքեր ունի, և վախկոտ կերպարանք մը,
այնքան երկնոտ է որ ամենուր կ'ըսէ. ներքէ՛ ինծի. միշտ հիւանդոտ է. և սակայն այնու
հանգերձ շատ կ'աշխատի: Իւր հայրը օղիով գինովցած տուն կը մանայ, և առանց
պատճառի մը զինքը կը ծեծէ. և ձեռք հարուած մը տալով՝ գրեթէ և տետրներն
օդոյ մէջ կը ցրուէ: Իսկ ինքը դպրոց կու գայ կապուտակեալ այտիւք, երբեմն ալ
բոլորովին ուռած երեսով, և չափազանց արտասուելէն կարմրացեալ աչք: Սակայն
բնաւ անհնարին է խոստովանցնել թէ հայրը զինքը ծեծեր է: — Հայրդ է ղբեզ
ծեծողը, — կ'ըսեն իրեն ընկերակիցքն: Բայց նա իսկոյն կ'ողողակէ: Սո՛ւա է. սո՛ւա
է: — զհայրը անպատիւ ընկելու համար: — Այս թուղթը դու չես այրած, — կ'ըսէ
իրեն վարժապետը, ցուցնելով կէս այրած դասն: — Այժ, — կը պատասխանէ ինքն
դողդոջուն ձայնիւ, — ձեռքէս կրակին վրայ ինկաւ: — Եւ սակայն լաւ գիտնիք թէ
իւր գինով հայրն է որ երբ տղան իւր դասը կ'ընէր, աքացեալ մը ստողը և լոյսը
չըջէց: Ինքը մեր տան ձեղունը կը բնակի՝ միւս սանդուխէն ելլալով. դռնապան աղա-
խնը ամենայն ինչ մօրս կը պատմէ: Սիւլիա քոյրս օր մը պատաշգամին վրայէն տղուն
աղաղակը լսեր էր, որ հայրը զինքը սանդուխտներէն թաւալչուր վար կը գլորտկէր՝
քերականութիւն գնելու ստակ ուղեւուն համար: Հայրը կը խմէ, չաշխատիր, և ըն-
տանիքն անօթի կը մնան: Քանի քանի անգամ խեղճ Բեռքոսսին անօթի դպրոց կու
գայ, և ծածուկ պզտի հաց մը կը կրծէ՝ զոր կառօն իրեն կու տայ, և կամ խնձոր մը
որ կարմիր փետուր ունեցող վարժուհին կը բերէ, որ և իրեն ստորնագոյն առաջին
դասու վարժուհին եղած է: Սակայն բնաւ չըսեր, — Անօթի եմ, հայրս ինծի
կերակուր չի տար: — Հայրը երբեմն զինքն առնելու համար կու գայ, երբ գիպուա-
ծով դպրոցին առջևէն կ'անցնի, տոգոյն՝ ծնգացը վրայ տանելով, դժնեայ երեսօք,
մազերն աչացը վրայ և քովնտի գտակաւ. իսկ խեղճ աղան երբ զինքը ճամբուն
վրայ կը տեսնէ՝ բոլորովին կը դողայ. սակայն այնու հանգերձ ժպտելով գիմացը

կը վազէ, և կարծես որ հայրը զինքը չտեսներ և ուրիշ բան կը խորհի: Խեղճ Բէռքօստի պատառոտեալ տետրակները կը կարէ, դասը սորուելու համար ուրիշներէ գրեանք փոխ կ'առնու, գնդասեղօք շապկին պատառոտուն մասերը իրարու կը միացնէ, և մարգուէ գուծը կը շարժի տեսնելով զինքն որ քայքայեալ հողաթափ ներով մարմնակրթանք կ'ընէ, այն գետին քուռող տաքատովն, և այն երկայն ներքնակաւն, որոյ թեզանիքն միշտ արմուշքը կը հասնին: Եւ մեծաբան կը պարտապի Առաքիններէն մին կ'ըլլար եթէ տան մէջ շանգիստ կարենար աշխատիլ: Առաւօտմ' այտիցը միոյն վրայ եզունգի նշանով մը դպրոց եկաւ, և ամենքը սկսան իրեն ըսել. — Հայրդ է, այս անգամ չես կրնար ուրանալ, ատկայ հայրդ ըրած է: Ըսէ՛ Տեսին որ զինքը քաղաքական տոտանը կանչել տայ, — Իսկ ինքը բոլորովին կարմրացած ոտք ելաւ, և 'ի ցամառնէն գողգոշուն ձայնիւ, — Սո՛ւտ է, սո՛ւտ է. հայրս զիս բռնէ չի ծեծեր: — Սակայն յետոյ գասի միջոց իւր աշաք արտասուքն ստուլն վրայ կը կաթէին. և եթէ մէկը իրեն նայէր, որպէս զի չտեսնէ, ինքզինքն կը բռնագատեր որ ժպտի, Խեղճ Բէռքօստի վաղը Տէռօստի, Քօռէթթի և Նէլլի առնալ պիտի գան. կ'ուզեմ զինքն ալ հրաւիրել, և կ'ուզեմ նախաձաշը մեկտեղ ընել, գրքեր ընծայել, ուսնը տակնուվրայ ընել՝ զինքը զուարճացնելու համար, և գրպաններն պողովք լեցնել, որպէս զի կարենամ անգամ մը զինքը գոհ տեսնել, խեղճ Բէռքօստի, որ այնքան աշնիւ է և այնքան արխատիր:

Գեղեցիկ այցելութիւն մը

12, Հինգուբթի

Ահաւասիկ ինծի համար անարւոյն ամենէն աւելի գեղեցիկ հինգաբլթիններէն մին: Ճիշտ ժամը երկուքէն Տէռօստի և Քօռէթթի տուն եկան՝ սապատողիկ Նէլլիի հետ 'ի միասին. իսկ Բէռքօստի չկրցաւ գալ, վասն զի հայրը թոյլ չտուաւ: Տէռօստի և Քօռէթթի գետ կը ծիծաղէին, ճամբան Գոսսսիին հանգիպելուն համար, բանըրաւ վաճառի որդւոյն, — այն որ անգլալ բազում մ'ունի և շիկահեր է, — որ ահագին կաղամբ մը կը տանէր ծախելու, որուն գրամովը յետոյ պիտի երթար գրիչ մը գնելու. բոլորովին գոհ էր, վասն զի հայրը գրած էր յԱմերիկոյ թէ օր օրուան վրայ իւր գալտեսանը սպասեն: Ո՛հ այն քաղցր երկու ժամերն որ մեկտեղ անցուցինք: Տէռօստի և Քօռէթթի գասին ամենէն աւելի երկու զուարթներն են. հայրս զասոնք սաստիկ սիրեց: Քօռէթթի գորշագոյն վերնազգեստ մը հագած էր և գտակն կատուի մօրթէ էր: Ստատնայի նման միշտ անհանգիստ է, և շարունակ կ'ուզէ գործել, շարժիլ: Արդէն իսկ առաւօտեան կանուխ ուսոցը վրայ կէս կողք փայտ կրեր էր, այնու հանգերը տարւո ամէն կողմը վազվազեց՝ ամէն բան իրաւելով և միշտ խօսելով, սկիւռի պէս կայտառ և երազաշարժ. և անցնելով խոհանոցէն, հարցուց խոհարար կնիկան թէ փայտին բեւրաջափին քանի կը վառէ, զոր իւր հայրը 45 հարիւրեակով կու տայ: Միշտ իւր չօրը վրայ կը խօսի, սկսեալ անոր զինուորութենէն 49դ խմբին մէջ, մինչև 'ի պատերազմն՝ Քուստուպայի, յորում գտնուեցաւ Հոսթերգ իշխանին գնդին մէջ. և շատ աշնուական կերպեր ունի: Թէպէտ ինքն փայտերու մէջ ծնէր և սնէր է, սակայն ունի իւր արեան և սրտին մէջ զազունականութիւն, ինչպէս հայրս կ'ըսէ: Իսկ Տէռօստի զմեզ շատ զուարճացուց. ինքն աշխարհագրութիւնը ուսուցչի մը պէս գիտէ. կը փակէր աչքերն և կ'ըսէր. Ահաւասիկ ես բոլոր Խաւկան կը տեսնամ, Ապենինեան լեռինքն որք մինչև Յոնիական ծովը կ'երկըննան, գետերը՝ որ աստ անգ կը հոսին, աշխարհացոյցի վրայ շանուանուած քաղաքներն,

նեղուցներն, կապոյտ ծոցերն, կանաչ կղզիներն. և անոնց ճիշտ անուանքն կու տար
կարգաւ, ամենայն երազութեամբ, իբր թէ թզթոյ վրայ ընթեռնոյր: Եւ տեսնելով
զինքն այնպէս բարձրագլուխ, խարանաշ խոպոպիկներով, փակ աչք, վերէն 'ի վար
կապոյտ զգեստ, ոսկեղծ կոճակներով, արձանի մը նման կանգուն և գեղեցիկ, ա.
մէնքն ալ կը հիւսնային, ժամուան մը մէջ գրեթէ երեք թռչող ճառագան սորուեր
էր, զոր միւս օր պիտի արուստանէր, Վիկտոր Թագաւորին մահուան յուզարկաւո-
րութեան հանգիսին տարեգարծին համար: Նոյն իսկ Նէլլի զարմացած և դորովով
իրեն կը նայէր, չգիշերով սեւաւ կաւէ շինուած զննակին գրօշակը, և ծիծաղելով
իւր այն վառվռան և մաղձոտ աչքն: Իւր այս գէմքը շատ գեղեցիկ ազդեցութիւն
մ'ըրաւ վրաս, մտացս և սրտիս մէջ իբրու կայծականց նման բան մը՝ ձգեց: Եւ քար-
ձեալ ախորժեցայ, երբ երթալու առեն տեսայ խեղճ Նէլլին այն երկու բար-
ձրահասակ և զօրեղաց մէջ, որ զինքը թեւերէն բռնած 'ի առան կը տանէին, այնչափ
ծիծաղեցնելով, որ բնաւ չէի տեսած իւր այնքան ծիծաղին: Մտնալով վերաստի
կերակոյց սենեակի, անգրագարձայ թէ չկայր անգ Ռիկոլէթթի Նկարը՝ որ զսա-
պատողն միմոսը կը ներկայացնէր. վասն զի չայրս շայն վերուցած էր, որպէս զի
Նէլլի չի տեսնայ:

Շարունակելի

— Խ Ռ Ս Կ —

— ԽՐԱՐԱԳԱՅ ՁԻՒՆՆ —

Անմիջապէս ջրհեղեղէն մի քիչ վերջ,
Արարգայ բարձր սարին ծերպին մէջ՝

Ձիւնի մի փերթ ինկնալով,

Անգ կը մընայ դարերով.

Բապիտակ և փայլուն,

Լուսի պէս շողողուն:

Արեգական մի ճառագայթ

Երբոր կ'երթայ զինք կը դրանէ,

Նա կը ցոլայ իր արամանդ,

Այլ բընաւին հալուել չէ:

Այսպէս մաքուր, անարատ

Կ'անցընէ հօտ դարեր շատ.

Նոյն առաջին աչքին առջեւ,

Երասխաձորը ոտքին տակ.

Մօտէն կ'անցնին լուսին, արեւ,

Կ'որոտան մայք և փայլակ:

Նա միշտ իւր տեղ անասան

Փայլի գեղով բընական:

Այլ ահա, սա ևս ձանձրանայ

Իւր փառաւոր վիճակէն,

Կ'ուզէ իջնալ վար լեռնէն,

Տեսնալ մօտէն՝ հոն ինչ կայ:

Օր մի՛ խօսք մէկ կը լինին

Քամիին հետ, կը թըռչին,

— Կարեւոր բոյն և դագար

Թողով Մասեայ ի կատար, —

Ու գէպ 'ի յերևան

Կամացուկ կը ցածնան:

Ճանապարհին ցուրտ քամին

Փոխուի լինի տապաքին,

Եւ երբ սեղմէ կամացուկ

Ընկերին ձեռքը փափուկ,

Ձիւնըն թռչնայ կը հալի.

Եւ յերևան հագիւ հասած,

Կեղառտ ցիխոտ մի փողոցի

Մէջը կ'ինկնայ նա՝ շուր գարձած:

Ո՛վ անարատ ամբիւ հասակ,

Կարգաւ, սորվէ դուռն այս առակ,

Եւ աւելի իմաստին

Ուշ դիւր՝ քան թէ իւր ձեռն:

Ձըլնին որ թէթէ խելքով դուռն ըզբեղ

Փոփոխամիտ քամիներու ձեռք մատենա.

Գիտեմ շուտով կը զըջաս,

Այլ անգարման կը մընայ քո մեծ վընաս:

Հ. ԳԵՐՈՎԵՐՎ. Վ. ԳՈՒՆԵՐԵԱՆ